

«Որդի, էրէխայ իշի պէս մենձանում են, նրանց հոգսը չեն քաշում, վարժատուն չեն բաց անում, չեն կարգացնում, հէնց ուզում են, թէ մեր գատածը խլեն»։*)

«Տօ փող էլ ուզես, կտամ, չունենամ—գլուխս կծախեմ, քեզ կպահեմ, թաք ըլի՝ էնպէս բան տես, որ խելքումս մտնի, իմ հաւարին հասնիս, էն ժամանակը հոգիս ուզես, քեզ թասիր չեմ անիլ, չեմ»։**)

«Թող ինձ կարգացնեն, որդուս ուսումն տան, մեզ ճամփայ շհանց տան, ճամփից, հաւատից չհանեն, սատանի փայ ըլիմ, մէկ բուռ հողի, մէկ գաղ կտաւի, ժամ, պաւարտգի հասրաթ, թէ աչքս ուզեն, չհանեմ, իրանց տամ, որդիս ուզեն, չմորթեմ, մատաղ անեմ»։***)

(շարունակելի)

Թ. Աւդալբէգեան



ԿԱՆՏԻ ԻՄԱՅԱԲԱՆ ՈՒԹԻՒՆԸ

II. Քննական ներածութիւն

1. Ռացիօնալիզմի եւ էմպիրիզմի քննադատութիւնը.

Էմպիրիզմի եւ ռացիօնալիզմի ուրեմն եւ ընդհանրապէս Նախ-կանտեան փիլիսոփայութեան այս տրագիկ վախճանը մի րօպէ այն տպաւորութիւնը թողեց, որ փիլիսոփայութիւնն առհասարակ իւր գործը վերջացրել է, որ նա այժմ սոսկ պատմական նշանակութիւն ունի, ուստի այսուհետեւ մարդկային միտքը իւր հարցասիրութեան համար պիտի ապաստանի առանձին մասնագիտութիւններին եւ ոչ թէ այդպիսի մեծ եւ խաբուսիկ ցնորքի, որի անունն է փիլիսոփայութիւն. բաւական է թողնել, որ փիլիսոփայութիւնը

*) «Վերք Հայաստանի», եր. 44.

**) Նոյնը, եր. 25.

***) Նոյնը, եր. 42.

ծանրանայ գիտութիւնների և ընդհանրապէս մարդկային մտքի վրայ: Լքման այդ քայքայիչ տրամադրութիւնը անշուշտ կարող էր տարածուել նաև մասնակի գիտութիւնների վրայ, քանի որ նրանք այլ բան չեն, բայց եթէ մասունք ընդհանուր համայնապարփակ մտածողութեան՝ փիլիսոփայութեան ուղղուած տիեզերքի զանազան մասերի վրայ, կամ միևնոյն մասի վրայ զանազան տեսակէտներից, քանի որ նոքա ևս հիմնուած են նոյն մտածական ակտերի, նախադրեալների և սկզբունքների վրայ, ինչ որ փիլիսոփայութիւնը: Որպէսզի մարդկային միտքը այդ մահաբեր լքումից ազատուէր և մի դրական քայլ առաջ դնար, հարկաւոր էր գտնել նախ այն թոյնը, որ բղխելով ռացիոնալիզմի և էմպիրիզմի ոգուց ի վերջոյ դէպի մահ առաջնորդեց նրան, այնուհետև որոշագոյն այն նոր ուղին, որով փիլիսոփայութիւնը իւր մէջ ունենալով նաև ռացիոնալիզմի և էմպիրիզմի ճշմարիտ տարրերը յառաջ շարժուէր վստահ և ապահով ժամանակների պատահական փորձանքներից և տրամադրութիւններից:

Նախ-կանտեան փիլիսոփայութեան մահաբեր թոյնը միակողմանիութիւնն է, ընդհանրապէս մտածողութեան կեանքին յատուկ մի թոյն, որ միաժամանակ ստեղծում է խոր և ինքնատիպ սխտեմներ, որոնք իրենց նախադրեալներից զարգանում և կատարեալ ամբողջականութեան են հասնում, միաժամանակ և քայքայում, որովհետև միակողմանի հիմքերից բղխող հետեւանքները որքան զարգանան, նոյնքան ակնյայտնի կը դառնայ նրանց թերութիւնը. նրանց մահը նրանց կեանքի մէջ է խմորւում և նրանց գերագոյն զարգացումը լինում է միաժամանակ և նրանց վերջնական խալառ քայքայումը:

ա. Ռացիոնալիզմի ֆննադատութիւնը.

Առաջին՝ ռացիոնալիզմը մտածութեանը հակադրում է զգայականութեանը որպէս պղտոր և խճճուած մտածութիւն, որի վրայ հիմնուած է միայն պրիզումատիւ նշա-

նակութիւն ունեցող գիտութիւնները, այնինչ անհրաժեշտ գիտութիւնները հիմնուած են յատուկ մտածողութեան վրայ: Մինչդեռ զգայականութիւնը հակադրուած է մտածութեանը ոչ թէ որպէս նրա պղտոր աստիճանը, այլ որպէս բոլորովին այլ սեռի կարողութիւն, և նրանց որոշիչ յատկանիշները ոչ թէ պղտորութիւնն ու պայծառութիւնն են կամ անհրաժեշտութիւնն ու պրիզումաութիւնն են, որովհետեւ կան իմացութիւններ, որոնք լինելով զգայական՝ միաժամանակ և անհրաժեշտ են և «պայծառ» (օր. մատեմատեկան). մինչդեռ մետաֆիզիկական, որ աւելիոնալիզմը համարում էր մտածապէս անհրաժեշտ գիտութիւն և որը հիմնուած է մտածութեան վրայ, անհրաժեշտ չէ, ընդհակառակն, աւելի պղտոր է և խճճուած. դրանց որոշիչ յատկանիշն այն է, որ մէկը մտածում է, միւսը պատկերացնում, մէկը ինքուկտիւ է, միւսը դեակուրսիւ, մէկը մատակարարում է հում նիւթ, միւսը դրանից իւր ձևերի միջոցաւ (կտեգորիա) օրինակարդում է բնութիւնը: — Բացի դրանից, միայն զուտ մտածութիւնը չէ իմացութեան աղբիւրը, — նա միայն անհրաժեշտօրէն կապակցում է զգայականութեան տուածները, որը կազմում է իմացութեան բովանդակութիւնը, և առանց որի մտածութեան ձևերը կմնային դատարկ, որովհետեւ նրանց ամբողջ ֆունկցիան սպառուում է զգայականութեան տւեալ բաղմազանութեան կապակցմամբ:

Ռացիօնալիզմը յանձինս Լայբնիցի մտածականօրէն անհրաժեշտ իմացութեանը հակադրում է փաստի իմացութիւնը, որը հիմնուած է բաւարար հիմնաւորման օրէնքի վրայ և անհրաժեշտ նշանակութիւն չունի. այսպիսի իմացութիւնն էր ըստ Լայբնեցի նաև բնագիտութիւնը, ճիշտ է, որ փաստի իմացութիւնը իր տւեալ բովանդակութեամբ կարող է սխալ լինել, այսինքն տւեալ ա-ն տւեալ Ե-ի հետ պատճառական առնչութիւն չունենալ, բայց որ ա-ին անհրաժեշտաբար պէտք է կանխէ որ և է բան, որպէս նրա պատճառ, այդ թոյլ տրւում է սկզբից և եթ. Ուրեմն փաստի իմացութեան հիմքում կան սկզբունքներ, որոնք

իրենց կողմից այլևս փաստի իմացութիւններ չեն, որ բաւարար հիմնաւորման վրայ յենուեն, այլ անհրաժեշտ են և կանխում են փաստի իմացութեանը, առանց որոնց բաւարար հիմնաւորման օրէնքի գործադրութիւնը միտք չէր ունենայ:

Երկրորդ՝ ըստ ռացիօնալիզմի զուտ բանականութեան ամբողջ օրգանիզմը միմիայն անալիտիկ-դեդուկտիւ իմացութեան օրգան է, մինչդեռ մեր բանականութեան արժէքաւոր գործը սինթէզն է: Անալիզը միայն կարող է պարզաբանել պատրաստի տրուած գաղափարի պարունական իմացութիւնը, առանց դուրս գալու նրա պարունակից և նոր բան ասելու, ուստի ճոխացումն և զարգացումն չի կարելի սպասել անալիտիկ գիտութիւններից: Մեր ամբողջ իմացութեան հիմքում՝ ծաւալում է սինտետիկ բայց անհրաժեշտ սկզբունքների մի ամբողջ սխտեմ, առանց որի հնարաւոր չէ որ և է գիտութիւն:

Ըստ ռացիօնալիզմի, սինտետիկ իմացութիւնները չունին անհրաժեշտ նշանակութիւն, մինչդեռ զուտ բնագիտութիւնը և մատեմատիկան, որ սխալուելով ռացիօնալիզմը անալիտիկ գիտութիւն էր համարում, անհրաժեշտ և հանրապարտագիր լինելով հանդերձ սինտետիկ են:

Երրորդ՝ ռացիօնալիզմն հաւատում է, թէ մտածութեան օրէնքները նոյնն են, ինչ որ նրանից անկախ իրականութեան օրէնքները: Այդ նախադրեալը դոգմատիկական է և անապացուցանելի, լինի նա հիմնուած օմտոլոգիական այն սխալ կարծիքի վրայ, թէ գաղափարի որոշիչն է նաև գոյութիւն ունենալը, կամ Աստուծոյ անխաբեքայութեան և կամ՝ նախասահման ներդաշնակութեան վրայ, որովհետև նախ՝ գոյութիւն ունենալը գաղափարի պարունակի մէջ չկայ, — ինչքան էլ մենք վերլուծենք գաղափարը, չենք կարող նրանից հետեցնել նրա գոյութեան մասին, երկրորդ՝ Աստուծոյ ճշմարտասիրութիւնը կամ նախասահման ներդաշնակութիւնը մի Deus ex machina է, մի անհիմն հրաշք, որ վայել չէ փիլիսոփայութեան հիմք ծառայեցնել:

բ. Էմպիրիզմի ֆենադասութիւնը.

Էմպիրիզմը նոյնպիսի միակողմանիութեամբ իմացութեան միակ կարողութիւնը համարում է զգայականութիւնը։ Մինչդեռ զուտ զգայութիւն չկայ. հոգեբանական այն փաստը, որ մեր առանձին զգայութեանց օրգանների մէջ կատարւում է մի գործողութիւն, որ խիստ նման է տրամաբանական ապերաջիտաներին իբրեւ փաստ ֆիկցիա է, այն միայն արատրակցիայով կարելի է զատել նրան ձեւաւորող սկզբունքներից, որոնցով թափանցուած է իւրաքանչիւր զգայութիւն և որոնք արդէն չեն կարող զգայութիւն — բովանդակութիւն լինել, որպէս ձեւաւորող գործունէութիւններ։ Եթէ սինսուալիստական էմպիրիզմը յառաջ տարուի և նրա մէջ նիրհող միակողմանիութիւնը զարգացուի, մենք շատ դժուար գրութեան մէջ կընկնենք։ Եթէ մեր իմացութեան ամբողջ բովանդակութիւնը զգայութեանց մի երամ է և զգայութեանց կտայն էլ մինչև անգամ՝ զգայութիւն է, եթէ «ես» էլ զանգուած է զգայութիւնների, այդ դէպքում մենք հնարաւորութիւն չէինք ունենայ բարձրանալ մասնակի զգայութիւններից և գիտակցել դրանց ներքին առնչութիւնը։ Փիտակցելու համար թէ a , a^1 , a^2 , a^5 ... զգայութիւնները նման են և տարբերւում են b , b^1 , b^2 , b^5 ... c , c^1 , c^2 ... զգայութիւններից և որ դրանց մէջ որ և է առնչութիւն կայ, հարկաւոր է նրանցից դուրս մի երրորդ կէտից սահմանել զգայութեանց յարաբերութիւնը և կապել նրանց։ Այն կեդրոնական կէտը, որից իբրեւ ֆոկուսից բղխում են որոշող և կապակցող ֆունկցիաները, է «ես»ը, իսկ ֆունկցիաները մտածութեան անալիտիկ և սինտետիկ ապրիորի սկզբունքներն են, որոնք իմացութիւն են առաջացնում, այսինքն կապում են, կարգաւորում են, զատում են... զգայութեան տւեալները։ Եթէ վերցնենք «ես»ը և իւր ֆունկցիաները այսինքն զուտ բանականութեան ամբողջ սիստեմը, որն արդէն զգայութիւն չէ, վերացրած կլինինք նաև զգայութիւնները կապակցելու և նրանց յարաբերութիւնը

գիտակցելու հնարաւորութիւնը, և որովհետեւ այդ հնարաւորութիւնը իրողութիւնն է, ուստի պիտի հրաժարուել անխառն զգայութիւն, անխառն փորձ ընդունելուց, երկու իմացական աղբիւր ունի մարդս, — ըմբռնութիւններ և զուտ բանականութիւն, զգայութիւն և մտածութիւն, չպէտք է աշխատել դրանցից մէկը միւսից արտածել, որովհետեւ դրանով ընկած կը լինինք միակողմանիութեան ստեղծած դժուար կացութեան մէջ, այլ ընդունելով դրանց որպէս փաստ՝ ձեռնարկել նրանց դերն բնոյթը որոշագրելու:

Քանի որ մասունքի ըմբռնութիւններն են իմացութեան աղբիւրը, բնական է, որ էմպիրիզմը միշտ պիտի խորշէ դեդուկտիւ մեթոտից, յանձնարարելով միայն ինդուկցիան: Ծիշտ է, գիտական ինդուկցիան աշխարհիմացութեան հիմնական և արդիւնաւէտ մեթոդն է, բայց պէտք է ի նկատի առնել, որ ինդուկցիայի հիմքում կան սկզբունքներ, որոնք այլեւս ինդուկցիայով ձեռք չեն բերուած և իրենց կողմից առաջինը՝ հնարաւոր են դարձնում ինդուկցիան, որոնք սակայն, թէև դետուկտիւ սկզբունքներ չեն, բայց ապրիորի են (կատեգորիաները, — օր. պատճառականութեան, սուբստանցիայի և այլն): Այս մէկը երկրորդ բացի այդ սինտետիկ ապրիորի ոչ-դետուկտիւ սկզբունքներից՝ ինդուկցիայից դուրս կայ նաև դետուկտիւ մեթոտ, որը ունենալով իւր առաւելութիւնները՝ երբեք չի հակասում ինդուկցիային, այլ ընդհակառակն՝ լրացնում է ինդուկցիան միտերում է նորիմացութեան պաշար, նոր գաղափարներ և լայնացնում է մեր գիտութիւնը, առանց սակայն տրամաբանական — ձեւական մի կուռ և անհրաժեշտօրէն կապակցեալ սինտետի վերածելու, իսկ դեդուկցիան պարզում է պատրաստի գաղափարների պարունակը, նրանց մէջ մտածուող իմացական պաշարը հանում, կառուցանում և մի հոյակապ շէնք կռում, անհրաժեշտօրէն կցելով ինդուկցիայի մատակարարած նիւթերը:

Երբ փորձով է սկսւում և փորձով էլ սպառւում է մեր իմացութիւնը, բնական է, որ էմպիրիզմը չի կարող ընդունել փորձառութեանը կանխող բնածին գաղափար-

ներս էմպիրիզմը իրաւացի է, որ չի ընդունում բնածին գաղափարների գոյութիւնը, սակայն դրանից նա իրաւունք չունի հետեցնելու, թէ տրամաբանական, մատեմատիկական և զուտ բնագիտական աքսեոմատիկ ճշմարտութիւնները բղխում, կամ աւելի ճիշտ՝ հետեւում են փորձից։ Նոքա հոգեբանօրէն ծագում են փորձի ազդեցութեան տակ և գիտակցում են յետագայում՝ փորձի վրայ խորհրդածութիւններ կատարելիս, բայց նոքա իրենց արդարացումը փորձի վրայ չեն կարող հիմնել։ Նոքա այլ ծննդական վկայական պիտի ներկայացնեն դրա համար, քան ապացուցեն, որ փորձից են ծագել։ — Նոքա փորձի հետ և նրա մէջ հանդէս եկող ու նրան ձեւաւորող սկզբունքներ են, օրէնքներ, որոնք կարող են գիտակցուել ուշ։

Էմպիրիզմն ուրեմն կարող է լինել գաղափարների հոգեբանական գենիզիսը բացատրող մի տեսութիւն, բայց նա դրանով չի կարող հակառակ լինել գնօսելօրդիական ապրիորիզմին, որովհետև հոգեբանական և գնօսելօրդիական տեսակէտները բոլորովին այլ մակարդակների վրայ են և չեն կարող իրար հանդիպել։

Վերջապէս պէտք է ասել, որ խիստ բնական է, եթէ ինչքան էմպիրիզմը զտուի ռացիօնալիստիկ տարրերից և դարգացուի զուտ փորձնական սկզբութեամբ, սկեպտիցիզմի կը յանգի, ինչպէս որ այդ իրօք էլ տեղի ունեցաւ։ Սակայն արմատական սկեպտիցիզմը, որից երբեք չի կարելի խուսափել իմացութիւնը ստորագասելով կեանքի գործնական պահանջներին, ինչպէս արեց Դաւիթ Հիւժը, անհնար է որպէս դրական աշխարհայեացք, քանի որ նա ինքն իրեն հակառում և ոչնչացնում է։ Նա դնում է այսպիսի մի թեզիս. — իմացութիւնն անհնար է ընդհանրապէս, և ձգտում է հիմնաւորել իւր թեզիսը՝ որոշ հիմքեր մէջտեղ բերելով։ Թեզիսի հիմնաբանելու այդ ակտը ինքնին հիմնուած է անհրաժեշտաբար այն հաւատի վրայ, թէ հնարաւոր է հիմնաբանելը, այլապէս հիմնաբանելը միտք չէր ունենայ, իսկ հիմնաբանելը մի իմացական ակտ է. ուրեմն այն՝ թէ հնարաւոր է հիմնաբանելը և միտք ունի, հաւա-

սար է այն բանին, թէ հնարաւոր է իմացութիւնը Ուրեմն «իմացութիւնը հնարաւոր է» ն կանխում է սկեպտիկի խորհրդածութեան իւրաքանչիւր քայլին: Այս տրամաբանական անհրաժեշտութեան փաստական արտայայտութիւնը գտնում ենք խիստ պարզ և աչքի զարկող Հիւմի մէջ, երբ նա ձգտում է օրինակ պատճառականութեան սկզբունքը ժխտել: Նա այսպէս է գատում. — երբ յաջորդական անսօցիացիայի ժամանակ a-ն և b-ն յաճախակի միացած են հանգէս գալիս, մեր մէջ սպասողութիւն է ծագում b-ի պատահելու ժամանակ a-ի առաջացման, ուրեմն a-ի և b-ի յաճախակի կրկնութիւնը՝ B-ն է սուբեկտիւ սպասողութեան՝ այսինքն պատճառականութեան գաղափարի՝ a-ի պատճառը. այսինքն B-ն A-ի պատճառն է: Պատճառականութեան գործադրութեամբ պատճառականութիւն է հերքում... Եւ սա պատահաբար աչքից խուսափող մի իրողութիւն չէ. այլ տրամաբանական անհրաժեշտութեամբ նրա ոգուց է բղխում: Իսկ եթէ սկեպտիկը ինքնահակասութիւնից խուսափելու համար պնդում և հաւատում է իմացութեան անհնարինութեան առանց հիմնաբանելու, դրանով նա ընկած կը լինի ամենագոռհիկ տեսակի դողմատիզմի մէջ, որովհետեւ նա յենում է չը պատճառաբանուած հաւատի վրայ:

Այսպիսով սկեպտիցիզմը իր երկու հնարաւոր ընթացքով ինքն իրեն հակասում և տրամաբանօրէն ոչնչացւում է:

(Նարունակելի)

Յ. Յ.



ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Սովաւ խնդրում եմ բարեհաճիք ղետնդելու հետեւեալը Ձեր պատուական ամսաթերթի մօտակայ համարներում:

Ամենափրկչեան վանքի Մատենադարանը կարող է ահա՛ նաւոր տեղ բռնել Ջուղայի հաստատութիւնների մէջ, և պատիւ բերել տեղւոյս հասարակութեանը: